ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

«... չեկավ ծառայություն ընդունելու, այլ՝ ծառայելու...»
(Մատթ. Ի. 28)։

Ազգային պատմության ցանկացած շրջափուլում Հայոց Կաթողիկոսները եղել են քրիստոսավանդ հավատքի անսասանության ու հայ ժողովրդի հոգեւոր-ազգային անվտանգության նվիրյալ պահապանները։ Հատկապես վերջին երկու հարյուրամյակներում, երբ մարդկային եւ հայ ազգային-եկեղեցական կյանքը ժամանակ առ ժամանակ փոթորկում են տարաբնույթ մարտահրավերներն ու հիմնախնդիրները, Հայոց Հայրապետները բազմաչարչար տքնությամբ շարունակել եւ շարունակում են իրենց առաքելաշավիղ ծառայությունը։ Հայ Եկեղեցու շնորհալի ու բազմաբեղուն գահակալների առաջին շարքերում է նաեւ ներկայիս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, որի քահանայական ձեռնադրության եւ օծման 50-ամյակը բոլորեց այս տարվա հոկտեմբերի 15-ին։

Հիսուն տարի առաջ եկեղեցական անդաստանում իր հաստատուն քայլերն անող երիտասարդ նորաօծ կուսակրոն քահանան շատ կարճ ժամանակում դարձավ Իր ուսուցչի՝ երջանկահիշատակ Վազգեն Ա. Հայրապետի գաղափարակիցն ու եռանդուն լծակիցը։ Համակված լինելով իր նախորդների ազգային-եկեղեցական տեսլականով՝ այն ժամանակ Գարեգին աբեղա Ներսիսյանն անմիջապես նվիրվեց հայ երիտասարդների կրթության եւ հայ հոգեւորականների մատաղ սերնդի պատրաստության առաքելությանը, որը նախանձախնդիր Հայրապետը շարունակում է իրագործել մինչ օրս։ Իր ողջ ծառայության ընթացքում Վեհափառ Հայրապետը ծավալել է բազմաբովանդակ գործունեություն, որն ընդգրկում է կրթական-քարոզչական, գիտահրատարակչական, եկեղեցաշինարարական, ընկերային, համազգանվեր, միջեկեղեցական ու միջկրոնական

եւ բազմաթիվ այլ՝ հոգեւոր ու հայրենանվեր կյանքին առնչվող ոլորտներ։ Աստվածային շնորհներով՝ իմաստությամբ, աստվածաբանական, եկեղեցաքաղաքական սրատեսությամբ, անբեկանելի ու անկոտրում կամքով ու նախանձախնդրությամբ, անսպառ եռանդով եւ կազմակերպչական մեծ կարողություններով զարդարված Վեհափառ Հայրապետը անցյալ դարավերջի եւ ԻԱ. դարասկզբի հայ եկեղեցականի կատարելատիպ է երիտասարդ հոգեւորականների համար։ Իր հայրենասիրական, եկեղեցասիրական, մարդասիրական հայացքներով ու բարոյախրատական ուսուցումներով նա խանդավառում է հայ զավակց սրտերը, նոր շունչ ու երանգ հաղորդելով ազգային-եկեղեցական մեր կյանքին։ Հայ Եկեղեցու Հովվապետի համբավը, ճեղքելով նեղ ազգային սահմանը, տարածվել է նաեւ արտերկրում, քրիստոնեական ավանդական մյուս եկեղեցիներում ու միջազգային տարաբնույթ կազմակերպություններում։ Ասվածի լավագույն վկայությունը այն շքանշաններն ու կոչումներն են, որոնց արժանացել է Գարեգին Բ. Ամենայն Հայոց Հայրապետը։

Մանրադիտակի տակ հետեւելով Վեհափառ Հայրապետի կենաց ընթացքին՝ կարելի է աներկբա ու պնդել, որ նրա բովանդակ կյանքը անձնազոհության մի խտացում է՝ համաձայն Ավետարանական այն խոսքի, որ «եթե ցորենի հատիկը հողի մեջ չընկնի ու չմեռնի, միայն ինքը կմնա, բայց եթե մեռնի, շատ արդյունք կտա» (Հովհ. ԻԲ. 24). ներկա սերունդներն արդեն իսկ Վեհափառ Հայրապետի հաստատակամությունից ու վճռականությունից ծնված պտուղների կենդանի վկաներն են։

Վստահ ենք, որ Ամենայն Հայոց Հայրապետի լայնածավալ եւ արդյունավոր աշխատանքի պտուղները դեռ երկար տարիներ զորացնելու են հավատացյալ հայորդիներին։ Ամենողորմ եւ գթառատ Տիրոջից հայցում ենք, որ Նորին Սրբությանը շնորհի երկար տարիների քաջառողջ կյանք, անկոտրում կամք եւ անսպառ եռանդ՝ քրիստոսառաք Հայրապետական տեսլականը կյանքի կոչելու համար։

Տ. ԱՐԱՐԱՏ ՔՀՆ. ՊՈՂՈՍՅԱՆ
Ս. Էջմիածնի մատենադարանի եւ հրատարակչության տնօրեն